«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Ուսուցչի համագործակցությունը ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

ԱՌԱՐԿԱ - **Ֆիզկուլտուրա**

ՀԵՂԻՆԱԿ - Հակոբ Խաչատրյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - Սևանի N1 միջն. դպրոց

Սևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն ---------- 2

2. Դաստիարակություն ---------- 4

3. Սովորողների կրթության կազմակերպումը, ուսուցիչ-ծնող ---------- 8

Փոխադարձ համագործացությունը

4. Ծնողական ժողովների դերն ու նշանակությունը---------- 10

5. Ժամանակակից տեխնիկան՝ որպես ուսուցիչ-ծնող համադործակցության միջոց-13

6. Եզրակացություն ---------- 15

7. Օգտագործված գրականության ցանկ ---------- 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը՝ որպես մարդկային սոցիալական կեցության հիմնական ձև, մոդել և համայնքի կառուցվածքային միավոր, համարվում է պետության հոգածության առարկա: Նրանով են պայմանավորված հասարակության վերարտադրության, աճող սերնդի դաստիարակության, սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացման իրականացման հնարավորությունները:

Աճող սերնդի դաստիարակությունը յուրաքանչյուր պետության կարևորագույն խդիրներից մեկն է , և մեր հանրապետությունում այն իրականացվում է պետական մակարդակով՝ սկսած նախադպրոցական ուսումնական հաստատություններից մինչև մասնագիտական կրթություն: Այս կարևոր առաքելության գործում իր անփոխարինելի դերն ունի նաև ընտանիքը: Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է՝ ավանդույթների, սովորությունների, մշակույթի, դաստիարակության և այլ բազմաթիվ հատկանիշների կրողն ու փոխանցողը: Ընտանիքը երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակության և կայացման հարցում:

Երեխայի դաստիարակությունը շարունակական պրոցես է, և այն դառնում է նաև դպրոցի առաքելությունը: Ընտանիքի և դպրոցի համագործակցության կենտրոնում սովորողն է, և եթե այս երկու կառույցները հաջողությամբ համագործակցում են, ինչն իր հերթին հանդիսանում է սովորողի կրթվելու և զարգանալու վճռորոշ տարր, ապա հաղթանակն ապահովված է:

Սակայն այսօր մեր ամենամեծ խնդիրն այն է, որ ընտանիքների մեծ մասը, տարված գերզբաղված առօրյայով ու ընտանեկան հոգսերով, չի զբաղվում իրենց երեխաների դաստիարակությամբ և ուսումնական գործընթացով, ընտանիք - դպրոց համատեքստում չի իրագործվում

երեխաների կրթա-դաստիարակչական գործունեությունը: Այսօր դպրոցում լուրջ խնդիր է հանդիսանում նաև որոշ ծնողների ինքնադաստիարակության հարցը, դեռահասների ճիշտ դաստիարակությունը շատ հարցերում պայմանավորված է նրանց իսկ ծնողների հետ տարվող աշխատանքների որակից:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացում ուսուցիչ-ծնող համագործակցության առանձնահատկությունները և տալ համապատասխան առաջարկություններ այդ գործընթացը բարելավելու համար, ինչպես նաև բարձրացնել ծնողների ներգրավվածության աստիճանը ուսուցման գործընթացին:

Հաճախ ծնողներն ստանձնում են միայն դիտորդի դեր: Եվ այս դեպքում շատ ճկուն ու հմուտ պետք է լինի մանկավարժը, որպեսզի կարողանա ծնողին դարձնել իր խորհրդատուն, համախոհը և գործընկերը:

Դաստիարակություն

Մարդու կյանքում զարգացման բոլոր փուլերը փոխպայմանավորված են և ամեն բան սկսվում է մանկությունից: Այն ինչը երեխան ձեռք է բերում մանկության շրջանում ուղեկցում է նրան ողջ կյանքում:

Դաստիարակության վարպետությունը կառուցվում է երեխայի ինքնուրույնությունն ընկալելու և նրան հասկանալու ու աջակցելու մանկավարժական կարողությունների հիման վրա: Մեծահասակը, հասկանալով և ուղղորդելով երեխային մանկության երկարաձիգ տարիների ընթացքում, նպաստում է մարդկային էությունն ու կենսակերպը բնորոշող երեք կարևոր հատկությունների ձևավորման՝ մտածելու, հաղորդակցվելու և ինքնուրույն կողմնորոշվելու:

Այսպիսով, դաստիարակությունը չափազանց պատասխանատու գործընթաց է : Երեխային ուղղորդելու համար անհրաժեշտ է հասկանալ նրան, գիտակցելով, որ նա ունի ցանկություններ, նախասիրություններ ու հետաքրքրություններ, ընդունակ է վստահելու կամ հակառակը՝ կասկածելու և վիրավորվելու, կարող է կարծիք հայտնել, պաշտպանել սեփական իրավունքները և որոշումներ կայացնել: Այս ամենը պատկերացնելու համար կարևոր է սիրել և զգալ աշակերտին ամբողջ սրտով, վստահել և հավատալ նրան: Մանկավարժության հիմքում ընկած է երեխային ճանաչելու, հետևաբար նրան հասկանալու կարևորագույն սկզբունքը, որն իր հերթին ենթադրում է համապատասխան մանկավարժական մտածելակերպ և համարժեք մասնագիտական մոտեցումներ: Մանկավարժության սիրտը հմուտ մանկավարժն է, որը ոգեշնչված երեխայի ներաշխարհը ճանաչելու հնարավորությամբ , կարող է կենդանի շունչ հաղորդել մանկավարժական գործընթացին: Այսինքն՝ դաստիարակությունը իրենից ներկայացնում է կառավարելի մանկավարժական գործընթաց՝ ուղղված երեխայի անձնավորության ձևավորմանը:

Դաստիարակության վրա շատ մեծ ազդեցություն են ունենում տվյալ հասարակության նորմերն ու արժեքները, սովորույթները, տարիքային առանձնահատկությունները:

Դասիարակությամբ զբաղվող ոչ մի կառույց երեխայի անձի ձևավորման գործում ունեցած իր դերով չի կարող համեմատվել ընտանիքի հետ: Վերջինս յուրահատուկ միջավայր է, որը երեխայի սոցիալական գործընթացում կատարում է հիմնական, երկարաժամկետ և կարևորագույն դեր: Ոչ ոք չի կարող անմնացորդ սիրել, հոգալ, երեխային վերաբերվել այնպես, ինչպես դա կանի ծնողը: Դրա հետ մեկտեղ՝ ոչ մի այլ սոցիալական կառույց չի կարող այնքան վնաս հասցնել երեխայի դաստիարակությանը, որքան՝ ընտանիքը: Ընտանեկան դաստիարակության անփոխարինելիությունը և կարևորությունը սակայն չեն նվազեցնում հասարակության դաստիարակության դերը: Հետևապես ընտանեկան դաստիարակությունը առանց դպրոցի աջակցության չի կարող տալ նշանակալի արդյունք:

Ծնողների հետ շփման ժամանակի սղությունը, փոխգործակցության սահմանափակումը, ընտանեկան դաստիարակության ավտորիտար ոճը ընտանիքում բարոյահոգեբանական և հուզական հարաբերությունների քայքայման պատճառ են դառնում, մինչդեռ դրանք ընտանեկան դաստիարակության արդյունավետության հիմնական այն պայմաններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի բնականոն զարգացման համար, և որոնց բացակայությունը հագեցնում ներընտանեկանհարաբերությունյերի ճգնաժամի, օտարացման և սերունդների միջև կյանքի իմաստաձևավորող կապերի: Դաստիարակության պրոցեսում նոր սերունդները պետք է յուրացնեն նախորդների կողմից ստեղծված փորձն ու գիտելիքը, տիրապետեն որոշակի կարողությունների, յուրացնեն հասարակության վարքային նորմերն ու փորձը և մշակեն կյանքի մասին հայացքների որոշակի համակարգ:

Ուսուցիչ-ծնողներ հարաբերությունները հաջողված են, եթե նրանք

միասին փորձում են գտնել ամենաարդյունավետ ուղիները, որոշել մանկավարժական կրթության բովանդակությունն ու ձևերը: Ծնողների ու մանկավարժների վերջնանպատակը նույնն է՝ հաջողել երեխայի աշխարհայացքի ձևավորման, դաստիարակության անչափ պատասխանատու գործում: Նման արդյունք, իհարկե, կարող է լինել, երբ նրանք դաշնակիցներ դառնան: Այս միությունը հիմնված է ձգտումների միասնության, կրթական գործընթացի վերաբերյալ տեսակետների, համատեղ մշակված ընդհանուր նպատակների և խնդիրների, նախատեսված արդյունքին հասնելու ուղիների վրա:

Ծնողները պետք է իրենց երեխաներին սովորեցնեն ընկալել կյանքը որպես ամենամեծ արժեք: Ծնողները իրենք պետք է սովորեն լսել և լսել իրենց երեխաներին, հասկանալ միմյանց:

Ուսուցիչը պետք է ծնողների մոտ դրական վերաբերմունք ձևավորի իրենց երեխաների ուսուցման, դաստիարակության և զարգացման խնդրի նկատմամբ, ճիշտ պարզի անախորժության պատճառը և ընտրի ծնողների հետ աշխատելու առավել արդյունավետ ձևերն ու մեթոդները՝ ուղղված դաստիարակչական մտքի բարելավմանը, ծնող-երեխա անախորժությունների հաղթահարմանը:

Դաստիարակության ընթացքի վրա շատ են ազդում տարիքային առանձնահատկությունները: Ծնողը պետք է տեղեկացված լինի երեխայի տարիքային առանձնահատկություններից՝ դաստիարակության գործընթացը խելամիտ, ճիշտ և հարթ կազմակերպելու համար: Երեխայի զարգացման յուրաքանչյուր փուլ պահանջում է և՛ ծնողից, և՛ ուսուցչից յուրահատուկ վերաբերմունք և շրջահայացություն, երեխայի ներաշխարհին ծանոթանալու ունակություն: Իսկ ընտանիքում առկա սոցիալտնտեսական եւ հատկապես հոգեբանական բնույթի խնդիրները՝ ծնողների անտարբերությունը միմյանց և երեխաների նկատմամբ, ձևական բնույթ կրող՝ «հանուն երեխայի հարաբերությունները, հաճախակի կրկնվող վիճաբանությունները, հանդուրժողականության պակասով պայմանավորված՝ «սերունդների կոնֆլիկտները, բռնությունը, հանգեցնում են անչափահասի կողմից շեղվող,

իսկ առանձին դեպքերում՝ հանցավոր վարքագծի դրսևորման: Դաստիարակության պրոցեսի մանկավարժական ղեկավարումն ամենից առաջ ուղղված է այն բանին, որ ընտանիքում և հասարակության մեջ ևսշարունակվի և ամրապնդվի այն, ինչ անում է դպրոցը՝ ձևավորելով երեխայի աշխարհայացքը: Ահա այստեղ է ուսուցչի աշխատանքի անգնահատելի դերը, եթե այն կազմակերպված է գրագետ և ունի մոտեցման ճիշտ ձև: Սակայն կարգապահության լավագույն դպրոցը՝ միևնույն է, մնում է ընտանիքը , որի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է:

Իսկ դաստիարակության գլխավոր դպրոցը՝ ծնողների փոխհարաբերություններն ու վերաբերմունքն է միմյանց նկատմամբ: Հաճախ ընտանեկան դաստիարակության շատ անհաջողություններ բացատրվում են ծնողների անբավարար մանկավարժական գրագիտության և երեխաների դաստիարակության համար ծնողների անհրաժեշտ փորձի բացակայությամբ: Ուստի, դպրոցի գերխնդիրն է՝ օգնել ծնողներին գտնելու երեխաների դաստիարակության այնչափ կարևոր ուղին: Ծնողներին օգնություն ցուցաբերելու համար կարելի է կազմակերպել ծնողական սեմինարներ, խմբային և անհատական խորհրդատվություն, ծնողական հանդիպումներ, ծնողական համաժողովներ, գործնական աշխատանքներ, դպրոցական և արտադպրոցական դասերին մասնակցություն և այլն:

Դպրոցականի անձնավորության ձևավորման մեջ հիմնականը պետք է լինի նրա կյանքի ու գործունեության ճիշտ կազմակերպումը, բարոյական, սոցիալական, հասարակական վարքի փորձը, որը ձեռք է բերում ուսուցիչների ղեկավարությամբ:

Սովորողների կրթության կազմակերպումը, ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործացությունը

Հետազոտական աշխատանքիս նպատակն է նպաստել, զարգացնել և կատարելագործել ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության, զարգացման և դաստիարակության որակների բարձրացման վրա,ինչպես նաև ծնողների ուսուցման գործընթացին ներգրավվածության աստիճանի բարձրացմանը: Մեր օրերում տեխնիկայի զարգացման շնորհիվ առավել լայն ու բազմազան կարող է լինել ծնողի ներգարավվածությունը և մասնակցությունը սովորողի կրթության կազմակերպման և դաստիարակության գործընթացներում: Ուստի բոլոր ուսուցիչներիս նպատակն է զարգացնել և կատարելագործել ուսուցչի և սովորողի ծնողի միջև կրթության կազմակերպման, դաստիարակության, արտադասարանական միջոցառումներում ներգրավվածության, համագործակցության ձևերն ու որակները:

ՈՒսուցիչ-ծնող համագործակցության նպատակներն են.

- Գտնել ընտանիքում առկա այն բոլոր հնարավորությունները, որոնք դրական ազդեցություն կունենան սովորողի վրա
- Բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան
- Ներգրավել ծնողներին ակտիվ մասնակցելու ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

Ծնողներին դպրոցական կյանքին մասնակից դարձնելը ունի շատ դժվարություններ ու խնդիրներ: Մեր խնդիրն է ուսումասիրել և բացահայտել ուսուցչի և սովորողի ծնողի փոխադարձ համագործակցության ընթացքում առաջացող դժվարությունները, առաջարկել նոր լուծումներ, որովհետև հաճախ են ծնողները ստանձնում միայն դիտորդի դեր: Մինչդեռ, երբ երեխան արդեն դպրոցում է, ծնողը պետք է փորձի համագործակցության ուղիներ գտնել և հնարավորինս համագործակցել ուսուցիչների հետ: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև

աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների և ուսումնական գործընթացի համակարգված ուսումնասիրություն:

Այսպիսով՝ մանկավարժներն ու ծնողները ունեն ընդհանուր նպատակներ, և առանց նրանց համագործակցության երեխայի կրթական գործընթացը բարդանում է, իսկ խնդիրներն ու խոչընդոտները դառնում են անհաղթահարելի: Դպրոցը երեխային տալիս է գիտելիքներ իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք, իսկ ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձի մի մասը:

Մեր նպատակն է նաև ներկայիս սերնդին նախապատրաստել փոփոխվող աշխարհում ապրելուն: Հաշվի առնելով, թե ինչպիսի լարված տարածաշրջանում ենք մենք ապրում, պետք է ուսուցման գործընթացը կազմակերպենք այնպես, որ աշակերտները գիտակցեն մեր հասարակության հիմնախնդիրները, որոնք կարող են լինել առանձնահատուկ՝ արժեհամակարգից, հայրենասիրությունից, ազգային և կրոնական առանձնահատկություններից: Պետք է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, աշխարհի մասին նրանց պատկերացումները, նրանց օգնել, որ հասկանան, թե ինչ է նշանակում ապրել բազմակարծիք հասարակության մեջ, լինել ինքնուրույն և ստեղծագործ:

Այսպիսով շատ կարևոր է, որ ժամանակի նոր մարտահրավերների պայմաններում կրթությունը կարողանա արդյունավետ արձագանքել և սովորողների գիտակցության մեջ ճիշտ ամրագրել հասարակության կյանքում տեղի ունեցող երևույթները, որն էլ թույլ կտա սովորողներին ճիշտ կողմնորոշվել այս հարափոփոխ կյանքում և մեկնաբանել բոլոր փոփոխությունների հիմքում ընկած դրսևորումների պատճառահետևանքային կապերը:

Ուրեմն, կարողանանք ձևավորել կյանքի լավ իմացություն և տաղանդ, և կերտենք երկրի ապագա պատմությունը:

Ծնողական ժողովների դերն ու նշանակությունը

Ծնողական ժողովը ուսուցիչ – ծնող փոխադարձ համագործակցության ավանդական ձևն է: Այս ժողովների ժամանակ հանդիպում են ուսումնական գործընթացի երկու կողմերը՝ մանկավարժներ և ծնողներ, որպեսզի քննարկեն և լսեն միմյանց, և վեր հանեն սովորողներին առընչվող բազմաթիվ խնդիրներ: Ծնողական ժողովները կազմակերպվում են հիմնականում դասղեկների կողմից, որի ժամանակ քննարկվում են սովորողների առաջադիմությունն ու վարքագիծը: Որոշ ծնողներ ծանոթ լինելով իրենց երեխայի ցածր առաջադիմությանը կամ վատ վարքագծին, խուսափում են մասնակցել ծնողական ժողովներին: Դա շատ սխալ մոտեցում է ծնողի կողմից, որն էլ աստիճանաբար բերում է անտարբերության: Որոշ դեպքերում էլ ուսուցիչն է աննրբանկատորեն սկսում գովաբանել լավ սովորողներին և նախատել թույլերին, որն էլ ծնողների մոտ առաջացնում է դժգոհություն: Նման դեպքերում պետք է խուսափել և թույլ չտալ հետևյալ սխալները.

- ✓ Համեմատել մի սովորողին մյուսի հետ,
- ✓ Բացասական գնահատական տալ ողջ դասարանին
- ✓ Գերագնահատել որևէ առարկայի կարևորությունը
- ✓ Նախատել որևէ ծնողի՝ բոլորի ներկայությամբ:

Ուսումնասիրելով ծնողական ժողովների դերն ու նշանակությունը ուսուցիչ – ծնող համագործակցության տեսանկյունից, շատ կարևոր է ծնողական ժողովները պարտադիր կազմակերպվեն նախապես մշակված պլանով, որը պետք է լինի նպատակային, բովանդակալից և արդիական: Դասղեկը կամ մանկավարժը պետք է ունենա հստակ նպատակ, ներկայացնի խնդիրները, որոնք պետք է լուծվեն համատեղ ուժերով՝ անչափ կարևորելով ծնողի դերը: Ծնողական ժողովների ժամանակ կարելի է կիրառել մի քանի կանոններ.

- Ծնողական ժողովները պետք է հրավիրել ծնողներին հարմար և նրանց հետ համաձայնեցված ժամանակին
- Ծնողները պետք է ծանոթ լինեն ժողովի օրակարգին
- Ծնողական ժողովի օրակարգը պետք է լինի նպատակային և տեղին
- Ծնողների և դասղեկի շփումը պետք է լինի անմիջական՝ էթիկայի կանոնների պահպանմամբ
- Ծնողական ժողովը պետք է լինի մանկավարժորեն լավ նախապատրաստված
- Ծնողական ժողովը պետք է սկսվի լավ տրամադրությամբ և տևի մեկ ու կես ժամից ոչ ավել
- Նախ պետք է խոսել դրական հարցերի շուրջ, ապա նոր անցնել բուն խնդիրների քննարկմանը
- Ծնողը պետք է համոզվի, որ դպրոցը պատրաստ է աջակցել իրեն՝ օգնելու իր երեխային
- Դասղեկը պետք է լինի անաչառ, բարյացակամ և ունենա մանկավարժական տակտի զգացում:

Որպեսզի ծնողական ժողովը լինի արդյունավետ և ծառայի իր նպատակին, անհրաժեշտ է այն կազմակերպել երեք փուլով .

- ❖ Նախապատրաստական փուլ---ընտրում ենք նպատակը, մասնակիցների կազմը, նախապատրաստում ենք սովորողների առաջադիմության թերթիկը, ձևավորում դասասենյակը և իրազեկում:
- ❖ Անցկացման փուլ-----կատարուն ենք դասարանի աշակերտների առաջադիմության վերլուծություն, ներկայացնում ենք դասարանում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտը, մատուցում հոգեբանա-մանկավարժական խորհրդատվություն և քննարկում կատարվելիք կազմակերպչական աշխատանքները:
- ❖ Արդյունքների ամփոփում----կատարել եզրակացություն, կայացնել որոշումներ, ճշտել ծնողների կարծիքը ժողովի մասին:

Ծնողական ժողովի արդյունքների մասին անհրաժեշտ է տեղեկացնել տնօրինությանը:

Հաճախ անհրաժեշտություն է լինում հանդիպել ծնողի կամ ծնողերից մի քանիսի հետ, առանձին՝ որևէ խնդրին լուծում տալու համար: Օրինակ՝ ծնողներին պետք է խորհուրդ տալ , որ իրենց երեխաներին թույլ տան դպրոցից հետո շարունակել իրենց շփումը, հատկապես դասապատրաստման պրոցեսում: Լավ սովորող աշակերտները կարող են օգնել իրենց դասընկերոջը դասերը պատրաստելու հարցում: Նման դեպքերում սովորողներն ավելի են մտերմանում և նրանց մոտ զարգանում է խմբով աշխատելու հմտությունները:

Որպեսզի ուսուցիչ – ծնող – սովորող փոխադարձ համագործակցությունը ավելի մտերիկ և ընկերական երանգ ստանա, կարելի է կազմակերպել համատեղ էքսկուրսիաներ, արշավներ, հանրօգուտ աշխատանքներ: Այդ նպատակով հրավիրվում են կազմակերպչական ծնողական ժողովներ, որի ժամանակ հաշվի է առնվում ծնողների կարծիքները՝ տալով նրանց ընտրության հնարավորություն, համատեղ լուծելու դասարանում մի շարք կազմակերպչական խնդիրներ: Այդ խնդիրները կարող են լինել տարբեր բնույթի: Օրինակ՝ դասարանական միջոցառումներ, էքսկուրսիաներ, արշավներ, զբոսանք բնության գրկում, դասարանական ցերեկույթներ, դասասենյակի, միջանցքի կամ որևէ վահանակի ձևավորում և այլն: Երբ քննարկումներն ավարտվում են և աշխատանքները բաժանվում, սկսվում են կազմակերպչական աշխատանքները: Նմանատիպ ակտիվ աշխատանքներում ծնողների ներգրավվածությունը առավել դրական է ազդում սովորող- ուսուցիչ - ծնող փոխադարձ համագործակցության վրա ու ստեղծում շատ հաճելի և դրական մթնոլորտ: Իրենց հերթին սովորողները մեծ ոգևորությամբ և աշխուժությամբ են մասնակցում կազմակերպչական աշխատանքներին: Իրենց կարծիքն ու ճաշակը հաշվի առնելու դեպքում՝ առավել մեծ պատասխանատվությամբ են մոտենում յուրաքանչյուր հարցին:

Ժամանակակից տեխնիկան՝ որպես ուսուցիչ-ծնող համագործակցության միջոց

Ինչպես գիտենք արդի աշխարհում զարգացած տեխնիկական միջոցները լայն ու բազմազան շփման հնարավորություններ են ընձեռում: Շնորհիվ շուրջօրյա հասանելիության ապահովման, ծնողն ու ուսուցիչը օրվա յուրաքանչյուր պահին հասանելի են միմյանց համար, որն էլ շատ կարևոր գործոն է և ունի մեծ նշանակություն ուսուցիչ – ծնող փոխադարձ համագործակցության վրա: Բազմազան և բազմաֆունկցիոնալ են առցանց հարթակները, որտեղ ազատ կերպով կարող են շփվել ուսուցիչները, ծնողներն ու սովորողները: Նմանատիպ հարթակներում կարելի է քննարկել ամեն ինչ: Նման շփումներն ու համագործակցություններն ունեն իրենց առավելությունները: Օրինակ՝ եթե սովորողը հետ է մնում կամ ինչ-որ խնդիր է առաջացել, չի կարելի սպասել այնքան մինչև ծնողն ինքը մոտենա, կամ այդ մասին բարձրաձայնել միայն որոշ ժամանակ անց՝ ժողովի ժամանակ: Նմանատիպ խնդիրների դեպքում ուսուցիչը պետք է անմիջապես կապ հաստատի ծնողի հետ, լինի դա հեռախոսով, սոցիալական որևէ ցանցի միջոցով, էլեկտրոնային փոստով: Հատկապես պետք է հետևողական լինել այն աշակերտների նկատմամբ, որոնք հակում ունեն շատ բացակայելու: Դասղեկը պարտավոր է հենց այդ պահին ճշտելու իր դասարանում բացակա աշակերտներից յուրաքանչյուրի բացակայության պատճառը: Բացի հեռախոսային կապից կարելի է օգտագործել watsapp, messenger ծրագրերը, facebook, telegram, instagram, twitter և այլ սոցիալական ցանցերը:

Սովորողն հաջողության կհասնի միայն այն դեպքում, երբ ճիշտ ժամանակին, փոխադարձ համագործակցելով իրեն կուղղորդեն և՛ ծնողը, և՛ ուսուցիչը միաժամանակ: Ուսուցիչը պետք է լինի

պոզիտիվ, առանց բացառությունների, պետք է յուրաքանչյուր սովորողի ծնողին ուղարկի տեղեկատվություն, օրինակ՝ ինչ զարմանալի կամ գովելի բան է արել իր երեխան դասի ժամին կամ դասից դուրս: Ամենափոքրիկ գովասանքն անգամ կարող է մեծ փոփոխություն, մեծ ոգևորություն ու պատասխանատվություն առաջացնել թե՛ ծնողի, և թե՛ սովորողի մոտ: Այս կապն է, որ հանդիսանում է ուսուցման կազմակերպման բարելավման շարունակական ֆակտոր:

Ժամանակակից զարգացած տեխնոլոգիական միջոցներով հաղորդակցումը խնայում է ուսուցչի ու ծնողի և՛ ժամանակը, և՛ տարածությունը: Եթե ծնողը ժամանակի սղության պատճառով չի կարողանում հաճախել դպրոց, ապա նման ծնողի հետ ուսուցիչը պարտադիր պետք է անընդհատ կապի մեջ լինի որևէ հարթակի միջոցով՝ անհատական տեղեկատվություն հաղորդի երեխայի մասին:

Եզրակացություն

Այսպիսով պարզեցինք, որ եթե ծնողը ակտիվ կերպով համագործակցում է ուսուցչի հետ, ապա սովորողի մոտ ի հայտ են գալիս բազում դրական հատկանիշներ: Բարելավում է նրա հաճախելիության ցուցանիշը, բարձրանում է առաջադիմությունը, զարգացվածության մակարդակը: Սովորողների մոտ զարգանում են սոցիալական կարողություններ և նրանց վարքը դառնում է դրական ինչպես դպրոցում, այնպես էլ՝ տանը: Ուստի և՛ ծնողը, և՛ ուսուցիչը անընդհատ պետք է թարմացնեն համագործակցության մեթոդները և կիրառեն նոր հմտություններ՝ սովորողի ուսման որակը բարձրացնելու համար: Սովորողն ինքնին դառնում է ավելի կարգապահ, կազմակերպված և պատասխանատու: Ծնողը պետք է ունենա մեծ կամք, իսկ ուսուցիչն ամեն ինչ պետք է անի, որ ծնողի մոտ բարձրանա մանկավարժական կուլտուրան: Շատ կրթական խնդիրներ լուծելիս ուսուցիչները անհրաժեշտ խորհուրդներ են ստանում ծնողներից, և հակառակը: Երբ ծնողն ու ուսուցիչը փոխադարձ համագործակցում են, սովորողի մոտ մեծանում է վստահությունը սեփական անձի և ապագայի հանդեպ, նա ավելի դրական է տրամադրվում դպրոցի հանդեպ, փորձում է բարձրացնել կրթական մակարդակը: Ծնողը սկսում է ավելի շատ հասկանալ ու ճանաչել իր երեխային, փորձում է թարմացնել սեփական գիտելիքները և ավելի շատ ուշադրություն հատկացնել երեխայի մտավոր զարգացման վրա: Ծնողի հետ փոխադարձ համագործակցության արդյունքում ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտի մասին ունենում է սպառիչ տեղեկություն, ցուցաբերում է անհատական մոտեցում և ունենում է ավելի լավ արդյունքներ: Ուսուցիչ – ծնող փոխադարձ համագործակցությունը դրական է ազդում նաև դպրոցի վրա: Դպրոցն ստանում է ավելի մեծ աջակցություն ծնողների կողմից, ինչպես նաև հասարակության մեջ բարձրանում է դպրոցի հեղինանությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ռուզաննա Մուրադյան <<Դասղեկ>> մեթոդական ձեռնարկ, Երևան 2007
2. Մ. Մելքունյան <<Մակարենկոն ընտանեկան դաստիարակության մասին>> Երևան 1985
3. Ա. Զադոյան, Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում/ Մանկավարժություն 2014
4. Մանկության հիմնախնդիրները ժամանակակից հայ ընտանիքում, 21 -րդ դարի մարտահրավերները, կանխման և աղթահարման ուղիները, գիտաժողովի նյութերի ժողովածու , <<Մանկավարժ>>, Երևան 2016
5. Հոգեբանություն և կյանք , Երևան 2011
6. ԿԱԻ <<Դաստիարակչական աշխատանքը դպրոցում>>, Երևան 2012